Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
Ф-24

ՓԱՌՆԱԿԷՍ.

ԽՕԼԵՐԱ

ՎՕԴԲՎԻԼ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԳԻՆԸ Է 40 ԿՈՊ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ
ՏՊԱՐԱՆ „Պ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.“
1905

891.99
Խ-24
№ 9367
ՓԱՌՆԱԿԻՍ.
-6 NOV 2011
Ս/Ղ

ԽՕԼԵՐԱ

ՎՕԳԲՎԻԼ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

1004
4335
ТИФЛИССКАГО СОБРАНІЯ
БИБЛІОТЕКА

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.

ԵՐԵՒԱՆ
ՏՊԱՐԱՆ „Պ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.“
1905

28.08.2012
59.780

Дозволено Цензурою Тифлисъ, 13 Октября 1904 г.

Настоящая піеса, подъ заглавіемъ „**Холера**“ разрѣшена Г. И. Об. Главноначальствующаго для представленія на сценахъ Края. Ноября 6 дня 1904 г. г. Тифлисъ.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ.

Այս վոդեվիլը գրել էինք ուսցեալ 1892 թուականի խոշերայի ժամանակ: Պատրաստուում էինք իր ժամանակին հրատարակելու, երբ լոյս տեսաւ պ. Թումանեանի «Խոշեր» անուն մի գործողութեամբ վոդեվիլը, որը սակայն մինչեւ օրս էլ ոչ ներկայացնելիս ենք տեսել եւ ոչ կարդացել: Ներկայ թուականի խոշերայի ձայնն է մեղաւոր, որ այժմ հրատարակում ենք:

ՊԱՌՆԱԿԻՍ.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

1. Մուխսի Ղազար, գործաթող վաճառական	65	տարեկան
2. Նարգիզ, նրա կինը	55	»
3. Զուշիկ, նրանց աղջիկը . . .	17	»
4. Անտոն Հէքիմեան, բժիշկ . . .	30	»
5. Դանիէլ Դիւանեան, ֆէլ'զէր . .	45	»
6. Համբо, մուխսի Ղազարի ծառան . .	20	»

Անդրը պատահում է Ե. . . քաղաքում.

ԽՕՂԵՐԱ

ՎՕԴԵՎԻԼ ՄԻԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Մուխսի Ղազարի տունը: Մէջտեղից ու կողերից մի մի դուռը. մէջտեղի սրատի վերայ երկու շուռամուռ, որոնք նայում են սրարտիզին, մի սրատի տակ սեղան՝ աշտանակներով եւ մի տախտ: Սեղանի վերայ հաշուեջոտը, մի քանի լրագրներ, թանաքամանան ու գրիչ: Վաղուագոյնը բացուելիս՝ մուխսի Ղազարը մոտաւոր նստած է սեղանի առաջ, Էփեմերդի գիրքը ձեռքին: Առաջը դրած է մի մեծ թաս մածուն, մի ամման սառոյց՝ դրգալը մէջը, մի շիշ ջուր եւ մի աղամանան:

ՏԵՍԻԼ Ա.

Մ. ՂԱԶԱՐ, ՓՈՔՐ ՑԵՏՈՑ ՀԱՄԲՈ

Մ. ՂԱԶԱՐ

(Հազալով) Էս անտէր հաղը հոգիս հանեց, եախիցս ձեռք չի քաշում էլի ... ինչքան կամ խմեցի, ինչքան թերխաշ ու խփշանցի՝ չօգնեց ... տեսնենք Էփեմերդին ինչ է ասում (Թերթելով գիրքը՝ կարդում է եւ մէջ ընդ մէջ հազում), «Վասն հաղի.—զսխատրն խորովեալ և զալճեղն ի մեղրն թաթախեալ կ�, կամ զինքն զսխատրն

եվեալ՝ մեղրով կեր». (գիրքը ծալում է), էս էլ փորձենք, տեսնենք ինչ է դուրս գալի։ Հաղը, էլի, ոնց որ լինի՝ կը տարուի, զուլումը խօլերն է, խօլերը ... երեկ, ասում են, հարիւր քսանն անցել է ... էսպէս որ գնայ՝ էլ մարդ չի մնայ ... տեսնես էսօր քանիսի՞ բկին է չոգել ... վախիցս բաղար էլ չեմ կարում դուրս գայ, որ իմանամ ո՞վ մեռաւ, ո՞վ սաղ մնաց ... թէ դրանից էլ, աչքով չը տար, եախէս թափ տուի՝ Աստուծով շատ կապրեմ ... լուսահոգի հէրս 95-ն անց մեռաւ ... էդ հասակին էլէ հասնենք՝ էնտեղից յետոյ ջհանդամը, ինչ լինում է՝ թող լինի։ (Վեր է կենում եւ սեղանի վրայից լրագիրը վերցնում), տեսնենք դուրսը ինչ նոր խարար կայ ... (քանում սկսում է կարդալ) ... «Մեզ հաղորդում են Երեւանից, որ խօլերան անխնայ կոտորում է ...», ՏԷ՛ր քեզ մեղայ ... «Ախալցխայից մեզ գրում են, բժշկի մեծ կարօտութիւն կայ, որովհետեւ խօլերան ... », էլի էդ զահրումարը ... «Շնորհակալութեամբ ստացանք բժիշկ Զարգարեանի խօլերան» դու զալաթ արիր, որ ստացար ... շատ լաւ բան ես ստացել, որ շնորհակալութիւն ես անում ... «Դիլիջանից մեզ գրում են, որ դեռ այնտեղ չի հասել խօլերան» ... ասա վախում էք չը հասնի՞ ... «Ղազախի քարվանսարա գիւղից մեր թղթակիցը գրում է, որ գիւղացիք գլուխներն առած՝ խօլերայից փախչում են» ... շա՜տ մեծ զալաթ են անում, ուր գնան՝ յետեւներից կը հասնի։ «Բագուից մեզ հեռագրում են, որ Սանթրոսեան բժիշկը մեռաւ խօլերայից» ... հը՞. ոնց է, էսպէս պահի քեզ՝ էս կեր, էն մի ուտի՞ ... տղայ ես, մի՛ մեռի, դիմացի՛ է ... սուտ բան է, մինչեւ քահանայ կամ վարդապետ չը մեռնի՝ ձեռքից չենք ազատուելու, համա ինչ մեռնելու կանդիտաներ կան մէջներումը՞ .... «Մի վրիպակ.—Անցեալ համարում սխալմամբ գրել էինք, որ Հին-Նախիջեւանում մինչեւ Օգոստոսի 20-ը խօլերայից 400 հոգի են մեռել, պէտք է լինի 600»—աչքդ լո՛յս, հիմի թող էդ մէկն էլ սխալուած լինէիր, ինչ կը լինէր, տնաքանդ, իրրև թէ ամեն բան գրուստ ես գրում՝ մէնակ էդ էիր սխալուել, որ գրստում ես. «Ֆէլիէտոն.—1837

և 1847 թուի խօլերան».—նորը հէրիք չէր՝ հինն էլ են բերում, խառնում հետը։ ԷՀ, բոշ բաներ են, յայտարարութիւնները տեսնենք, (շրջում, կարդում է). «Խմբագրատանս մէջ վաճառւում է նոր հրատարակութիւն՝ Խօլերա»։ Ծախէ՛ք, ծախէ՛ք, նաղդ առուտուր է, կոտրուէք դուք ձեր առուտուրով, էլ ուրիշ ապրանք գլխներիցդ կարուել էր ինչ է, ինչ կարդում ես՝ խօլեր հա խօլեր ... մէկ էդ գրողների, տպողների բողազից չի բռնում, խեղդում, որ եախէքս աղատուի, պրծնենք. (լրագիրը վայր է դնում)։ (Հաղալով եւ Թաշկինակով հով տալով երեսին), ո՛ւֆ, հոգիս հանեց շոգը ... արեւի տակ հում ձու որ դնես՝ հաւատա խաշի։ Վախում եմ, համա մի արդուզ պիտի խմեմ, ինչ դուրս է գալի՝ թող դուրս գայ (մի երկու կտոր սառոյց է գցում Թասի մէջ, ջուր ու աղ լցնում եւ դրգալով խառնում), էս էլ իմ լիմօնադն է, երկու կոպէկի մածուն ու սառուց, ջուրն ու աղը լցրու քեռաէն, խառնի, սառցրու ու էսպէս (խառնելը վերջացնելով) դիր բերանիդ ու մինչեւ տակը քաշի դամաղիդ (խմում է, բայց բոլորը չը վերջացրած՝ շունչը կտրւում է եւ Թասը բերանից յետ տանում), օխա՛յ ... և եմուտ արդուզն յուրախութիւն տեառն իւր ... լաղդա՛թ ... ինչ կայ չը կայ ներսը՝ իրար խառնեց. շոգի հոգին հանեց ... կիսատ չը թողնենք, թէ չէ սատանէն ոտները մէջը կախ կանի. (կրկին դնում՝ բերնին եւ սկսում խմել)։

ՏԵՍԻԼ Բ.

ՆԱ ԵՒ ՀԱՄԲՕ

ՀԱՄԲՕ

(Ճտապ ներս է վազում բօռալով) Մշոլուղս տուէ՛ք, խանրաջի, բարիշնա, աչքներդ լո՛յս ... (տեսնելով Մ. Ղազարին՝ սառում մնում է) վա՛յ ...

Մ. ՂԱԶԱՐ

(Վախից թասը վեր է գցում ձեռքից ու կոտրում), Վա՛յ, անիծուես դու գեաղա, պապիս թասը ձեռքից գնաց, ինչ ես զոռզոռում, հայվարայ, մէշումն ես, թէ չօլումը։

ՀԱՄԲՕ

Էլ ո՞ր տեղան աչքալխն ա, որ չը բօռում, մուխսի աղա։

Մ. ՂԱԶԱՐ

Ի՞նչ աչքալոյս է ասը, եաբանի, ափսո՞ս պապիս թասը։

ՀԱՄԲՕ

Մենձ աչքալիս ա աղա, թասը ոչինչ, չարդ տարու։

Մ. ՂԱԶԱՐ

Ասա՛, ասա՛ տեսնեմ ի՞նչ կայ։

ՀԱՄԲՕ

Մշալուղս գալիս ա՛ ...

Մ. ՂԱԶԱՐ

Գալիս է, գալիս։

ՀԱՄԲՕ

Ըզմրդ ...

Մ. ՂԱԶԱՐ

Հա՛, ասում եմ է՜ ...

ՀԱՄԲՕ

Քեզ ըսօր խօլերի նաչալնիկ են ջոկել, աղա։

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Էս ի՞նչ է դուրս տալի .. (Նրան) ձին գլխիդ քացով հօ չի՞ տուել։

ՀԱՄԲՕ

Դուզ եմ ասում, աղա, ... շուտով հըլա թագաւորից քօմմա խօլերի նաչալնիկներին նագրադ պտի դուս գայ ... մշալուղս տուը, աղա, քու կենացը մի հուպ տամ, (մատով խփում է պարանոցին)։

Մ. ՂԱԶԱՐ

Էնպէս հուպ տամ ես քու չանէդ, որ լեզուդ բերանումդ չորանայ ու պապանձուի, որ էլ սարսաղ սարսաղ դուրս չը տաս ...

ՀԱՄԲՕ

Ընչի՞ որ, աղա, ի՞նչ եմ արել ...

Մ. ՂԱԶԱՐ

Խելքդ գլխի՞դ է, աղա, ի՞նչ խօլերի նաչալնիկ, պապիս թասը սաղացրու, թէ չէ գլուխդ ջարդ ու փշուր եմ անում ... ձեռ ես առել ինձ։

ՀԱՄԲՕ

Չէ՛, վալլահ, մուխսի աղա, հանաք չեմ անում։

Մ. ՂԱԶԱՐ

Խօլերի նաչալնիկը ո՞ւն է, աղա։

ՀԱՄԲՕ

Եանի թէ, ուստարաշի, խօլերը քշող, էլի, աղա ... էն ի՞նչ են ասո՞ւմ, մտքիցս ընկաւ ... մին թաւուը անուն ա, լեզուիս ծերին ա է՜, աղա ջան ... թո՛ւ ... քու մէջն անիծուի ... (մտաբերելով) կա՛ց, կա՛ց, աղա ջան, էս սհաթը ... սատ ... սատ ... կասես էդ ըլի հա ... սատան .. սատանի ... հա՛, հա՛, միտքս ընկաւ, սատանի տաբ, մուխսի աղա ջան, սատանի տաբ։

Մ. ՂԱԶԱՐ

Այ սատանէն քեզ տանի քո բերած խարաբով, չի ամաչում՝ մշալուղ էլ է ուզում։ Դէհ, քաշուի՛ր աչքիցս կորի ...։

*

ՀԱՄԲՕ

Ընչի՞ ես հերսոտում, աղա, ես ինչ անեմ ... գոխտուրենց գեաղէն ասաւ ... հրմի որաեղ որ ա՝ ասաւ, գոխտուրն էլ՝ կը գայ, ասաւ, որ աղիդ հետ գնան հայաթնին ու քարվանսարէքը թամզացնեն։

Մ. ՂԱԶԱՐ

Քեզ ասում եմ չքուի էստեղից, թէ չէ քիթ ու պռունկդ գզում եմ հա, օյինբազ ... (կողմը) խէր խաբար է բերել։

ՀԱՄԲՕ

(Կողմը) Դրուստ, չըլի՞ թէ բուրդս գզի (ուզում է դուրս գնալ).

Մ. ՂԱԶԱՐ

Ո՞ւր ես կորչում, թասի կտրատանքը հաւաքիր, տար է՞ ... դրա գինը քու հախից եմ դուրս գալու, չը կարծես, թէ կը մարսես։

ՀԱՄԲՕ

(Հաւաքելով՝ կողմը) Աչքս լո՞յս, ... տեսաք մշալուղ առնելը։

Մ. ՂԱԶԱՐ

Պրծի՛, քաշուիր էստեղից։

ՀԱՄԲՕ

Պրծայ, աղա ... (դուրս գնալով՝ կողմը) քեզ տեսնեմ, խօլիր աղա, դու՛ սրա դատաստանն անես. (գնում է)։

Մ. ՂԱԶԱՐ

Էդ էր պակաս ... սիրաս անունը լսելիս, թալաքն ընկած լորի պէս հերիք չի լըփլըփում է՝ հրմի էլ սանիտաը են ջոկել, որ լափ ոտներս ձգեմ։ Եախիցս որ ձեռք չը քաշեն՝ ինչ անեմ։ Չը լինի դրուստ բժիշկը գայ ... որ եկել է՝ հաւատա բանս բուրդ է ... ինչ անեմ հրա ... (մտածելով) .. ինչ աղատուեմ, եախէս թափ տամ ... (յանկարծ) գտայ, գտայ .. սուտ հիւանդանալուց լաւը չը կայ (աղաղակելով), Համբօ, Համբօ, տո Համբօ, (կողմը) կորել է՞ ... (աւելի բարձր եւ լայն ձայնով)

Համբօ ջան, Համբօ (փորը բռնելով) օ՛յ, օ՛յ, օ՛յ ... (բոռալով) Համբո՜օ՜օ՜, ա՛յ, մեռնե՛ս, թէ դաս հա՜ ...

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՒ ԵՒ ՀԱՄԲՕ

ՀԱՄԲՕ

(Ներս վազելով), Հը, հը, մուխսի աղա, ինչ ա, ինչ ...

Մ. ՂԱԶԱՐ

(Լացով՝ փորը բռնելով) Զօռը պինդ ա, օյ, օյ, օյ, մուխսի աղէդ սուփրէն հաւաքում է ...

ՀԱՄԲՕ

(Նոյնպէս լացի եղանակով) Ո՞նց թէ աղա ...

Մ. ՂԱԶԱՐ

Էլ ինչ ոնց ... գնում եմ, մնաս բարով ...

ՀԱՄԲՕ

(Լացով) Ո՞ւր, աղա ...

Մ. ՂԱԶԱՐ

(Մատը վերեւ տնկելով) Էն դունիէն ...

ՀԱՄԲՕ

(Կողմը) Ասուած բարի ճանապարհ տայ (նրան) բերանդ խէրով բաց, աղա ...

Մ. ՂԱԶԱՐ

Փորիս ղաղուցը չես լսում, կարծես չաթել է էդ զահրումարը, օյ, օյ, օյ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՄԲՈ

(Կողմը) Ասուած եմ յուսացել, (նրան՝ յետ յետ քաշուելով), ամա՛ն, աղա՛ Ջան, վախում եմ, աղա՛։

Մ. ՂԱԶԱՐ

Մի՛ վախի, մօա՛ արի։

ՀԱՄԲՈ

Ես դալաթ եմ արէ՛ աղա՛, (կողմը) տեղն ա՛, մշալուղս չե՞ս տայ (նրան) չլինի՞, աղա՛, Թառզաղենց գեադի պէս ... (մտածելով եւ գլուխը Ցօթուելով), ամա՛ չէ՞, դու ո՞նց կանես։

Մ. ՂԱԶԱՐ

Հը՞ ... նա ի՞նչ էր արել որ ...

ՀԱՄԲՈ

Էլ ի՞նչ պլտի անէր ... հողը գլխին բերեց՝ պրծաւ ... թանով սպաս էր կերել ախմախը հէրիք չի՝ եղնուց էլ մի մենձ քեասա արդ ...

Մ. ՂԱԶԱՐ

(Վախով) Արդուղ էր խմել ...

ՀԱՄԲՈ

Բա՛ս ... պնչիցը գար։ Չը խմէր, լաւ չէ՞ր։ Խմել էր տնաքանդը, որ իր տունը քանդեց Է՞ ...

Մ. ՂԱԶԱՐ

Ասում ես մեռա՛ւ ...

ՀԱՄԲՈ

Հա՛, չարդ տարաւ, աղա՛ Ջան, ... անիծած թանով սպասն ու արդուղը խեղճի տունը քանդեցին ... մին սուրու եթիմ ա թողէ, աղա՛, ուրթը Ջան։

Մ. ՂԱԶԱՐ

(Վախեցած եւ կցկտուր) Տէր ողորմած Աստուած ... (կողմը) հանաքը չընհանաք չը դառնա՛յ, (նրան) մեռաւ ու մեռաւ էլի։

ՀԱՄԲՈ

Բաս ի՞նչ ըլաւ, աղա՛ ... մի սահաթ չը կայ՝ ինչ դրօգը գցեցին՝ տարան թաղեցին։

Մ. ՂԱԶԱՐ

Աղա՛, սխալ հո չե՞ս ... ասում ես արդուղ էր խմել ...

ՀԱՄԲՈ

Թանով սպաս էլ էր կերե՛, աղա՛, ամա՛, գոխտուրն ասել ա՛, նրա տունը քանդողը արդուղն ա՛ ըլէ՛, չունքի՛, ասում ա՛, հում ջրով ա՛, աղա՛։

Մ. ՂԱԶԱՐ

Է՛, ի՞նչ անենք որ ...

ՀԱՄԲՈ

Ո՞նց ինչ անենք, աղա՛, գոխտուրնին ասում են խոլերի ժըժմունքը հաղարներով հում ջրի մէջ լեղ ա տալի, հէնց էդ ժժմունքն ա նրա տունը քանդել, էլի։

Մ. ՂԱԶԱՐ

(Լացի ձայնով) Բաս իմն էլ պլտի քանդի, իմ բանն էլ բուրդ ա՛, էլի՛, բաս ես էլ (լացախառն երգում է) «Մերձեցայ ես ի դուռն գերեզմանի» ... (յանկարծ փորը բռնելով), օյ, օյ, օյ, կտրաց, կտրաց։

ՀԱՄԲՈ

(Վախեցած) ի՞նչ ըլաւ քեզ, աղա՛ ...

Մ. ՂԱԶԱՐ

Ախր ես էլ, Համբո Ջան ...

ՀԱՄԲՕ

Երդուղ խմեցիր, աղա։

Մ. ՂԱԶԱՐ

Բաս ինչ արի, չօռ ու ցաւ խմէի ...

ՀԱՄԲՕ

(Կողմը) Ամէն ...

Մ. ՂԱԶԱՐ

Զոգը հոգիս հանեց, ինչ անեմ։

ՀԱՄԲՕ

Բաս ես իմ գլխի ճարը տեսնեմ ... փասափուսէս քաշեմ ... (ուզում է փախչել)։

Մ. ՂԱԶԱՐ

Տօ անշնորհք, կաց է՞, ինձ մենակ ուր ես թողնում ... էս է քու հաւատարմութիւնը՞ ... ուր ես փախչում ախր ...

ՀԱՄԲՕ

(Վերադառնալով.—լացի ձայնով) Վախում եմ ինձ էլ շորշոփը դիպչի, աղա ... մի տուն քիւլփաթի տէր էլ ես եմ։

Մ. ՂԱԶԱՐ

Մի վախի ... Աստուած ողորմած է, վաղիր բժիշկ Անտոն Հէքիմեանի տուն, շո՛ւտ, էս սհաթիս հասիր ու ասա, որ ազէս բանից պրծել է ... (փորը բռնելով) վայ, վայ, վայ, չէ՞, պարկելս խէր է ... հօրդանս էլ բեր, հօրդանս։

ՀԱՄԲՕ

(Կողմը) Վայ քու ապիս ապայ, հրմի գնամ մշալուղս գոխտուրից ուզեմ, չաղ թիքայ ա. (Նրան) հրէս թռայ, աղա, (վազում է դուրս)։

Մ. ՂԱԶԱՐ

(Յետեւից կանչելով) Կաց, կաց, յետ արի, Համբ. (յետ է դալիս). Խանումիդ ու Զուշիկիս բան չասես ... դէ թռի, ամա առաջ հօրդանս բեր (փորը բռնելով), օյ, օյ, օյ, թռի Համբօ ջան, որ ես, ամա՛ն, ամա՛ն, մեռայ, հրէս վեր ընկայ, ամա՛ն, Համբօ ջան, հօրդանս։

ՀԱՄԲՕ

(Կողմը) Դրուստ ոտները չը ձգի՞. (Նրան) սիրտդ պինդ պահի, աղա, հրէս թռայ, հրէս հօրդանդ բերի, հրէս եկայ (գնում է)։

Մ. ՂԱԶԱՐ

(Յետեւից) Զո՛ւտ արա, շո՛ւտ, ապրիս դու, Համբօ, օյ, օյ, օյ, թող հրլա մի գա՛յ, էն օյինը սարքեմ, որ եկած ճանապարհը մոռանայ ... էս հալիս սանիտարն էր պակաս։

ՀԱՄԲՕ

(Ներս է դալիս վերմակը ձեռքին), Ա՛ռ, աղա ջան ... ես գնացի. սիրտդ պինդ պահի, (վազում է դուրս)։

Մ. ՂԱԶԱՐ

(Մօտենում է աջակողմեան դրանն ու կանչում), Զուշիկ, այ Զուշիկ ջան, գնանուկ Զուշիկ, բալա ջան ... (առնելով վերմակը) հիմի պարկելու պատրաստութիւն տեսնենք։

ՏԵՍԻԼ Գ.

ՆԱ ԵՒ ԶՈՒՇԻԿ

Ի՞նչ էիր հրամայում, հայրիկ, հօրդանն ինչո՞ւ էիր ուզել։

Մ. ՂԱԶԱՐ

Հէնց էնպէս, օյ, օյ, օյ, Զուշիկ Ջան ... գնա մի բարձ բեր՝ քիչ պարկեմ։

ԶՈՒՇԻԿ

Ինչի՞, ի՞նչ կայ որ, հայրիկ։

Մ. ՂԱԶԱՐ

Ժամանակ չը կայ, շուտ արա, արդուղը առնս քանդեց։

ԶՈՒՇԻԿ

Ո՞նց թէ արդուղը առնդ քանդեց, ի՞նչ ես ասում, չեմ հասկանում։

Մ. ՂԱԶԱՐ

Ցեռոյ կը հասկանաս, դու շուտ արա, բարձը բեր, ժամանակ չը կայ։

ԶՈՒՇԻԿ

(Դուրս գալով՝ կողմը) Չը լինի՞ թէ՝ ... Աստուած մի՛ արասցէ ... էն ժամանակ վայ իմ օրին, (գնում է)։

Մ. ՂԱԶԱՐ

Խեղճ իմ Զուշիկ ... սրա բաղդն էլ մի օր չը բացուեց, Հոր պրծնէինք։

ԶՈՒՇԻԿ

(Բարձը բերելով) Ախը էդ ի՞նչ ես եղել, հայրիկ, է՞, սիրաս մի տեսակ անհանգիստ է։

Մ. ՂԱԶԱՐ

(Անհանգստութեամբ) Ինչ եմ եղել ... (կողմը) արդուղին հարցրու ... (նրան) ոչինչ չը կայ, գառնուկ Ջան ... (բարձը ձեռքից առնելով՝ փորը բռնում է), ամա՜ն, ամա՜ն, ամա՜ն, բան չը կայ, Հրայա Ջան (պարկում է

տախտի վրայ), շուտ արա, մի լաւ ծածկիր ինձ։

ԶՈՒՇԻԿ

(Ծածկելով) Ո՞նց ոչինչ չը կայ, երեսիդ գոյնը թռել է։

Մ. ՂԱԶԱՐ

Թռել է՞ ... ուր է թռել, ո՞նց է թռել, օյ, օյ, օյ։

ԶՈՒՇԻԿ

Ի՞նչից ես նեղանում, հայրիկ, հիւանդ ես ...

Մ. ՂԱԶԱՐ

Չէ, բալէս ... (տնքալով) հիւանդ չեմ, մի քիչ մրսել եմ ... վայ, վայ, վայ, դողացնում եմ (կողմը) արդուղը դրուստ որ ոտներս պէտք է ձգի։ (Նրան) դու մէկ գնա, կօնեակը բեր, վախում եմ էն զահրումարից լինի, այ գեօրաղեօռ լինիս, արդուղ հնարող, օյ, օյ, օյ, նրանից է էլի, վախ, վախ, վախ ....

ԶՈՒՇԻԿ

Խօլերից, հայրիկ, էդ ի՞նչ ես ասում։

Մ. ՂԱԶԱՐ

Բերանդ քեզ քաշիր, ո՞նց թէ խօլերից։

ԶՈՒՇԻԿ

Բաս ինչից, հայրիկ, ոչինչ չեմ հասկանում։

Մ. ՂԱԶԱՐ

(Ցանկարծ) Ամա՜ն, Զուշիկ Ջան, կտրեց, կտրեց, կտրեց, (ոտները կուչ ու ծիգ է անում), վախ, վախ, վախ, արդուղ չէ՝ չօռ խմէի ես։

ԶՈՒՇԻԿ

(Գլխին խփելով) Չէ, հաստատ բռնել է, վայ իմ օրին (կանչելով) մայրիկ Ջան, մայրիկ, շուտ հասիր ... էս ի՞նչ եկաւ մեր գլխին։

Մ. ՂԱԶԱՐ

Ի՞նչ ես բօռում, աղջի, բան չը կայ, գնա, գնա, բալէս, գնա

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ Գ.Գ.Բ.Ա. Պուբլիչնայա Б
7/XI-1922
ՍՈՍԿՎԱ, Մյասնի
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Ա

կոնեակը բերը, մի վախի, հանաք եմ անում ... մօրդ էլ կանչի ... չասես թէ հիւանդ եմ, հիւանդ չեմ։

ՁՈՒՁԻԿ

(Կողմը) Խելքս բան չի կարում, վախում եմ թէ ...

Մ. ՂԱԶԱՐ

Դէ գնա, Ձուշիկ է ...

ՁՈՒՁԻԿ

Գնում եմ, հայրիկ, գնում, (գնում է)։

Մ. ՂԱԶԱՐ

(Յետեւից կանչելով) Ձուշիկ, շուտ արա, որ ես հալից ընկայ։

ՁՈՒՁԻԿ

(Ներս գալով կոնեակի շիշն ու բաժակը ծեռքին) Բերի, հայրիկ, բերի։

Մ. ՂԱԶԱՐ

Ապրիս, բալա ջան, (ածում, խմում է եւ բաժակը յետ տալիս), առ, բալէս, տար տեղը դիր, ի՞նչ եղաւ մայրիկդ։

ՁՈՒՁԻԿ

Հիմի կը գայ, հայրիկ, գնամ ասեմ գայ (գնում է)։

Մ. ՂԱԶԱՐ

Ձլնի՞ Նարգիզը բժշկի մօտ խօսք թուցնի, թէ հիւանդ չեմ ու զօռով զօռով սանիտարութիւն անել տան. (վազում է աջակողմեան դրան մօտ ու կանչում), Ձուշիկ, Նարգիզ, Նարգիզ, Ձուշիկ։

ՏԵՍԻԼ Ե.

ՆՍ, ՁՈՒՁԻԿ ԵՒ ՆԱՐԳԻԶ.

ՁՈՒՁԻԿ, ՆԱՐԳԻԶ

(Ներս վազելով) Ի՞նչ է, ի՞նչ ...

Մ. ՂԱԶԱՐ

Ո՞ւր կորաք ախը է (փորը բռնած՝ շտապ դուրս է գնում), օյ, օյ, օյ, ձեռք չի վերցնում էլի, նահլաթ քեզ չար սատանայ, էս ծերութեանս էս էր պակաս (դուրս է գնում)։

ՆԱՐԳԻԶ

Ո՞ւր ես գնում, ա՛յ մարդ։

Մ. ՂԱԶԱՐ

Եկայ, եկայ, հալս հալ չի, հրէս գալիս եմ։

ՁՈՒՁԻԿ

Որ ասում ե՞մ ... հօ տեսնում ես, որ էսօր ուրիշ տեսակ է երեւում, ամեն օրուան հայրիկը չէ։

ՆԱՐԳԻԶ

Է՜հ, դու էլ, էլի էն է՝ էլի էն. ի՞նչ տեսակ պիտի երեայ, նորա հանաքները նոր ես տեսնում։

ՁՈՒՁԻԿ

Չէ, մայրիկ, հաստատ հիւանդ է. նոր պարկած էր. բարձն ու ներքանը չես տեսնում ...

ՆԱՐԳԻԶ

Ոչինչ, հիւանդ էլ լինի՝ ձեռաց քէֆը կը լաւացնեմ ... (յանկարծ գրկում, համբուրում է)։ Ըհը՜, կրակ չուտես, Ձուշիկ։

ԶՈՒԶԻԿ

Եղպէս յանկարծ ի՞նչ իմացար, մայրիկ։

ՆԱՐԳԻԶ

Ինչ իմացայ ... շատ բան. (երկու ձեռքից բռնելով՝ առաջ է բերում), ինձ մտիկ տուր ... (մատներով նրա մազերը սանրելու նման յետ է տանում՝ դրստում) Ջիւան Ջանիդ, Ջէյրան բոյիդ մեռնի մայրիկը, մայրիկի աղիզ բալայ (գրկում, համբուրում ու բաց է թողնում) օխա՛յ, կարօտս առայ, անուշ Ջան ... աչքդ լոյս ... բաղդդ բացուել է, աղջի։

ԶՈՒԶԻԿ

Սուտ, սուտ, հանաք ես անում, մայրիկ։

ՆԱՐԳԻԶ

Քա ինչ հանաքի ժամանակ է, սուտս որն է։

ԶՈՒԶԻԿ

Որ հանաք չէ՝ դէ ասա ո՞վ է։

ՆԱՐԳԻԶ

Կաց հէրդ էլ գայ է՞ ... կասեմ, բալա Ջան, կասեմ, բաս չեմ ասի՞լ ...

ԶՈՒԶԻԿ

Չէ՛, առաջ ինձ ասա, կարելի է խսկի սրտովս էլ չի, էլ հայրիկին ո՞ւր ասես։

ՆԱՐԳԻԶ

Դէ նազ մի անի ... կուզես՝ հալա ուրախութիւնից տրանգի էլ կը տաս ... բժիշկ Անտոնից լաւ մարդ ես ուզում, չէ՞ ...

ԶՈՒԶԻԿ

Քա, բժիշկ Անտոնն է ուզում ...

ՆԱՐԳԻԶ

Հա՛, հա՛, ծամդ երկարի, չես հաւանում, չէ՞։

ԶՈՒԶԻԿ

Լաւ, էլ ինչու՞ ես մասխարայ գցում, մայրիկ։

ՆԱՐԳԻԶ

Չես հաւատում ... այ էս քանի օրս որ կը գայ ու կուզի՝ կը տեսնես։

ԶՈՒԶԻԿ

Ո՞վ ասաց, մայրիկ Ջան ...

ՆԱՐԳԻԶ

Աբրահամենց Թաղագիւլը ... գոխտուրին խտտող տատմէրն ա ասը։

ԶՈՒԶԻԿ

Հիմի եմ հասկանում, թէ ինչու՞ էր շուտ շուտ ինձ մտիկ տալիս ու ծիծաղում։

ՆԱՐԳԻԶ

Քա, ի՞նչ, աղջի։

ԶՈՒԶԻԿ

Մասունքների բերած օրը։

ՆԱՐԳԻԶ

Ո՞րտեղ ...

ԶՈՒԶԻԿ

Եկեղեցումը ... հէնց հիմի ես ասելու հայրիկին։

ՆԱՐԳԻԶ

Հա՛, հա՛, դէ գնա քէֆ արա ... մեռնիմ մասունքների գոլութեանը ... բաղդդ բաց արաւ (խաչակնքում է)։ Զուտով հօրդ վրից Անտոնը մի ոսկի մէդալ էլ քաշ կանի ... ըսէնց որ չըլէր՝ ո՞ւր էր ասը նրան խօլերի նաչալնիկ ջոկում, ինչպէս երևում է՝ շատ դարմանի տակի ջուրն ա մ՛ա, փէսէն։

ԶՈՒԶԻԿ

Դրուստ ... ամա ... մի բան խնդրեմ, մայրիկ Ջան ... հոգուդ մեռ-

ԳՊՊ ... ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕКА

նեմ, չասես թէ ես գիտեմ ... հայրիկից շատ եմ ամաչում։

ՆԱՐԳԻԶ

Լաւ, լաւ, որ չես ուզում՝ չեմ ասի։

ՏԵՍԻԼ Զ.

ՆՐԱՆՔ ԵՒ ՀԱՄԲՕ

ՀԱՄԲՕ

(Ներս վազելով) Հաղրուի, հրէս եկաւ, մուխսի աղա (տեսնելով նրանց) էս ուր է գնացել, էստեղ չէ՞ ...

ՆԱՐԳԻԶ

Հիմի կը գայ ... ով եկաւ, Համբօ։

ՀԱՄԲՕ

(Կորուկ եւ կէս ծիծաղ) Ե՛ս, ով ...

ՆԱՐԳԻԶ

Ը՞հ, փչուիս դու, սիրաս վեր թռաւ։

ԶՈՒԶԻԿ

Քիչ մնաց ուշքս գնար։

ՀԱՄԲՕ

(Կողմը) Տնաքանդները կասես թղթից ըլեն շինած՝ փչես թէ չէ վեր կընկնեն. (նրանց) Թէ շատ վախեցաք՝ գնամ ջուր բերեմ։

ՆԱՐԳԻԶ

Էդ ջուրը տար քո գլխին ածա, անշնորհք։

ԶՈՒԶԻԿ

Դրուստ ով եկաւ, Համբօ։

ՀԱՄԲՕ

Ո՞վ պտի ըլի .. գոխտուրն ա։

ԶՈՒԶԻԿ

Բժիշկը՞ ,.. որ բժիշկը ...

ՆԱՐԳԻԶ

Գոխտուրը՞ ... ինչ ես ասում, Համբօ։

ՀԱՄԲՕ

(Կողմը) Մարդ իմանայ ինչ են զեօրմամիշի պէս զարմանում, (նրանց) հա, հա, գոխտուրը։

ՆԱՐԳԻԶ, ԶՈՒԶԻԿ

Անտանը՞։

ՀԱՄԲՕ

Հէնց նա։

ՆԱՐԳԻԶ

(Լուսամուտից ներքեւ նայելով Զուշիկին) Նա է, նա, փախի, փախի, աղջի, քանի չի եկել. (Զուշիկը շփոթուած դուրս է գնում եւ դրան մէջ հանդիպում է հօրը։

ՏԵՍԻԼ Է.

ՆՐԱՆՔ ԵՒ Մ. ՂԱԶԱՐ

ՆԱՐԳԻԶ

Ո՞ւր մնացիր, այ մարդ ...

Մ. ՂԱԶԱՐ

(Համբօյին) Հը՞ ... եկար ...

ՀԱՄԲՕ

Եկայ, աղա ...

Մ. ՂԱԶԱՐ

Բաս բժիշկը՞ ...

ՀԱՄԲՕ

Էս ա գալիս ա, աղա, ֆէբշէյն էլ հետն ա ...

Մ. ՂԱԶԱՐ

Լաւ, դու գնա բանիդ ...

ՀԱՄԲՕ

Գնամ, աղա ... (գնում է)։

Մ. ՂԱԶԱՐ

(Նարգիզին) Դու էլ գնա, տեսնենք ինչու համար են գալիս։

ՆԱՐԳԻԶ

Էլ ինչ տեսնես, ես գիտեմ ինչու համար են գալիս ... աչքդ լոյս, Ղազար ջան, համա մշալուղս պիտի տաս։

Մ. ՂԱԶԱՐ

Էսօր տեղից վեր կենողը մշալուղ է ուզում, դու էլ Համբօն հօ չը գառաբ ... ոնց թէ աչքդ լոյս ... ուրախացել ես հա, որ հիւանդացել եմ։

ՆԱՐԳԻԶ

Ի՞նչ ուրախութիւն, ինչ հիւանդանալ, ինչ ես ասում ... գալիս է Զուշիկիդ ուզելու, փէշից պինդ բռնի, բաց չը թողնես։

Մ. ՂԱԶԱՐ

Ո՞վ ախը. (կողմը) ոնց թէ ...

ՆԱՐԳԻԶ

Եկողը, Ղազար ջան, եկողը ...

Մ. ՂԱԶԱՐ

Բժիշկ Անտոնը՞ ...

ՆԱՐԳԻԶ

Բաս ֆէբշէյը՞ ... հէնց նա ...

Մ. ՂԱԶԱՐ

Ես ֆէբշիլին էլ եմ ուզի՝ թէ որ սուտ չըլնի ... (կողմը) խելքի տոպրակ ... (դրսում ոտների ձայն է լսւում)։

ՆԱՐԳԻԶ

Եկան, եկան ... ուզողը Անտոնն է, Անտոնը, քեզ ասում եմ ... (դուրս է փախչում կողքի դռնով)։

Մ. ՂԱԶԱՐ

(Ապշած) Ի՞նչ ասաց ... Անտոնը՞ ... Անտոնը՞ ... ո՞նց թէ Անտոնը ...

ՏԵՍԻԼ Ը.

ՆԱ, ՀԱՄԲՕ, ՏԵՏՈՅ ԲԺԻՇԿ ԱՆՏՈՆ ԵՒ ԴԱՆԻԷԼ.

(Վերջին երկուսը ոտքից գլուխ սպիտակ շապիկներ հագած).

ՀԱՄԲՕ

(Ներս ընկնելով) Բժիշկ Անտոնը, մուխսի աղա ... (գնում է)։

Մ. ՂԱԶԱՐ

(Ապշած) Անտոնը՞ ... Անտոնը՞ ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Ներս մտնելով՝ կանգնում է դրան մէջ, Դանիէլը առաջ է անցնում)

*

Մ. ՂԱԶԱՐ

(Ապշած) Անտոնը՞ .. (տեսնելով նրանց՝ վախեցած, կողմը) հրաժարիմք ի սատանայէ ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

Հը՞, ո՞վ է հիւանդը։

Մ. ՂԱԶԱՐ

(Նախկին ապշութեամբ եւ ինքն իրան) Անտոնը՞ ... (խաչակնքելով) օրը ցերեկով սիպտակ սատանէք։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Այո, Անտոնն եմ, մուխսի աղա, ասում եմ ով է հիւանդը։

Մ. ՂԱԶԱՐ

(Ուշաթերուելով եւ խոնարհ գլուխ տալով), Ա՞յ դուք բարով, հաղար բարի եկաք, ձեր ոտնամուտը շնորհաւոր։ Հիւանդը ես եմ, պ. բժիշկ, ես, ես եմ հիւանդը, ամա հիմի քեզ որ տեսայ՝ էլ հիւանդ չեմ։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ես առանց էն էլ պիտի գայի հարկաւոր գործով, բայց ծառան ինձնից շուտ եկաւ. լաւ է, որ հիւանդ չէք, թէ չէ մեր սանիտարն ով պէտք է լինէր։

Մ. ՂԱԶԱՐ

Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ ... (կողմը) էլի միտքս ընկաւ. (նրան) չէ, գոխատուր ջան, հանաք եմ անում, հիւանդ եմ, հիւանդ։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ի՞նչպէս թէ հիւանդ չեմ ու յետոյ էլ հիւանդ եմ։

Մ. ՂԱԶԱՐ

(Փորը բռնելով՝ կողմը) Սանիտարը ... (նրան) ամա չէ, հա, հա, ինց չէ, հիւանդ եմ, հիւանդ, պ. բժիշկ, օյ, օյ, օյ ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ի՞նչ, ցաւում է ...

Մ. ՂԱԶԱՐ

Շատ փիս, բժիշկ ... (առաջանում է դէպի բժիշկը, որ յետ յետ է գնում)։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Դէ լաւ, լաւ, առաջ մի գայ (ձեռքի փայտով առաջ է մղում նրան իրանից, իսկ յետոյ դառնում է Դանիէլին), գործդ սկսիր ... (Դանիէլը ախտահանական սրուակը ռէտինէ փամփուշտներով ձեռքն առած՝ անձայն ու անիսօս սկսում է սրսկել սենեկի չորս կողմը եւ Մ. Ղազարի վերայ՝ առանց ընդհատելու)։

Մ. ՂԱԶԱՐ

Եա՜ ... էս ի՞նչ շան հոտ է ... փի՞ւֆ, ... փի՞ւֆ ... (մօտենալով), ներս համեցէք, պ. բժիշկ, ձեր տունն է։

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Ձեռնափայտով չի թողնում, որ մօտենայ), Հեռո՜ւ, հեռո՜ւ կանգնիր ու խօսիր, (Մ. Ղազարը հեռանում է), ասա տեսնեմ ի՞նչդ է ցաւում։

Մ. ՂԱԶԱՐ

Հէնց ամեն տեղս, բժիշկ, փի՞ւֆ, փի՞ւֆ ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ի՞նչպէս թէ ամեն տեղդ։

Մ. ՂԱԶԱՐ

Ամեն տեղս էլի ... փի՞ւֆ, բժիշկ, .. հէնց ինչ ունեմ, չունեմ՝ ցաւում է, բժիշկ ջան, փի՞ւֆ, բժիշկ։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ասա տեսնեմ, փորի գոգուց ունիս։

Մ. ՂԱԶԱՐ

Շատ փիս, շատ թունդ ... փէ՛ւֆ ... փէ՛ւֆ գուգուս, բժիշկ, փէ՛ւֆ ... հերիք է, հերիք, փէ՛ւֆ, ֆէրշիլ Ջան, փէ՛ւֆ (Դանիէլը շարունակում է):

ԲԺ. ԱՆՏՈՆ

Սիրտդ խառնո՞ւմ է:

Մ. ՂԱԶԱՐ

Եանի քիչ է մնում հա ... (ձեւացնելով, թէ ուզում է խառնել՝ մօտենում է) պ. բժիշկ. (բժիշկը փայտով հեռացնում է) ... փէ՛ւֆ Դանիէլ ... խո՞ւլ ես, չես լսո՞ւմ ... դէ հէրիք է էդ գահրումարը, փէ՛ւֆ, ցանես էէ (կողմը) էս լաւ օյին բերի գլխիս:

ԲԺ. ԱՆՏՈՆ

Երևի շուտով գլուխդ կը պատուի ու սիրտդ էլ կը խառնի:

Մ. ՂԱԶԱՐ

Դէ ասա աչքս լոյս էլի (կողմը) թէ էդպէս լինի՝ վայն եկաւ քո աներոջ գլխին էլի:

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Ձեռնափայտը մեկնելով դէպի առաջ) Լեզուդ հանի տեսնեմ (լեզուն հանում է:—Պէնսնէն դնելով) ՀՀՀ, պէտք է պարկես, իսկոյն պէտք է պարկես:

Մ. ՂԱԶԱՐ

Պարկած էի, բժիշկ, նոր վեր կացայ, (կողմը) գլուխս մեռնի՝ թէ բան հասկացաւ. (նրան) էդ հօ կը մեռնեմ փես ը, ը, ը, ... մեղայ Աստուծոյ, բժիշկ Ջան:

ԲԺ. ԱՆՏՈՆ

Չէ, մի վախենայ:

Մ. ՂԱԶԱՐ

Էլ ի՞նչ չը վախենամ, ով պարկեց՝ գնաց:

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ո՞ւր գնաց:

Մ. ՂԱԶԱՐ

(Մատը տնկում է վերեւ, որի միջոցին Դանիէլը սրսկում է հէնց քթին) Ի վերին Երուսաղէմ ... փէ՛ւֆ .. տօ ամնասաուած, մեռայ էէ. (կողմը) էս ի՞նչ կրակն ընկայ տո՛ ....

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ականջ մի անի, չես մեռնի, ես էստեղ չեմ:

Մ. ՂԱԶԱՐ

Հա՛, հոգուդ մատաղ, փեսս ... մեղայ Աստուծոյ, բժիշկ Ջան, գիտեմ, որ չես թողնի մեռնեմ, Զուշիկս եթիմ կը մնայ:

ԲԺ. ԱՆՏՈՆ

Թուղթ ու գրիչ կա՞յ:

Մ. ՂԱԶԱՐ

Կայ, բժիշկ Ջան, կայ. առաջ արի, նստի էլի, ի՞նչ ես ամաչում, տունը քոնն է, մէկ էդ մեռելի պատանքն էլ հանի, թէ Աստուած կը սիրես, վախում եմ:

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Ծիծաղելով) Հա, հա, հա ... էստեղ էլ լաւ է. վռազ եմ, տուր էստեղ. (Մ. Ղազարը ուզում է թուղթ ու գրիչը տալ). կա՛ց, ձեռք մի՛ տալ, ես ինքս կը վերցնեմ. (մօտենում եւ վերցնում է, Դանիէլը անդադար սրսկում է, բժիշկը սկսում է դեղատոմսը գրել):

Մ. ՂԱԶԱՐ

(Դանիէլին) Փս՞սս՞սս ... փս՞սս՞սս ... մե՛ծ բանի վրայ ես էլի (կողմը) քու տէրն էլ կասի նախքումը էշ ունեմ էլի (մօտենալով բժշկին) սրան մի ասա վերջ տայ էէ ... փէ՛ւֆ ... բժիշկ Ջան ...

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Նրան) Մօտ մի գայ, հեռուից խօսիր (հեռանում է) բաւական է, Դանիէլ, (Դանիէլը դադարեցնում է, իսկ ինքը շարունակում է դրել):

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Օվվվվէ ... հոտ եմ առում է ...

ԴԱՆԻԷԼ

Ընդհակառակը շատ դիւրեկան հոտ է, մուխոի աղա:

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Պապիդ արեը, մէկ դու ես դուրեկան՝ մէկ էլ բու դեղը (նրան) էդ պարկապզուկն ինչ ածի Դանիէլ:

ԴԱՆԻԷԼ

(Ծիծաղելով) Ի՞նչ պարկապզուկ ...

Մ. ՂԱԶԱՐ

Այ, էդ, որ փչում ես (բժիշկը ծիծաղում է):

ԴԱՆԻԷԼ

Էս պարկապզուկ չի:

Մ. ՂԱԶԱՐ

Բաս ինչ ա, փուչիկ ա:

ԴԱՆԻԷԼ

Պուլվերիզատոր:

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Դէ արի ու միտքդ պահի (նրան) մի խօսքով ինչ ածի էդ պարկապզուկ, փուչիկը ...

ԴԱՆԻԷԼ

Երեք մանէթ:

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Վեր կենալով եւ էլի կանգնելով դրան մէջ) Ծառային խսկոյն ուղարկիր դեղատուն. այս թղթով երկու դեղ կը տան, թոզ ու կաթիլներ: Թոզից օրը երեք անգամ մի մի պարաշօկ կընդունես, իսկ կաթիլներից 18 կաթիլ՝ էլի երեք անգամ օրը: Դրել եմ, որ տան մի պուլվերիզատոր, կամ պարկապզուկ՝ փուչիկ, ինչպէս դու ես ասում, և մի չիչ կարբոլի թթու, որով ամբողջ սենեակները ու վրէդ կը սրսքկես, հասկացար:

Մ. ՂԱԶԱՐ

Իմացայ, բժիշկ Ջան:

ԲԺ. ԱՆՏՈՆ

Հա, մի փոքրիկ սրուակ էլ սպիտակ դեղ կը տան, որի անունն է աղեթթուա, соляная кислота, Ջուր խմելիս՝ Ջրի մէջ 10—10 կաթիլ կը կաթացնես, որ խօլերի բացիլները սատկուեն. հում Ջուր չը խմես:

Մ. ՂԱԶԱՐ

Շատ բարի, բժիշկ Ջան ... օյ, օյ, օյ, ... էլի բռնեց ... վախ, վախ, վախ ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Ցետ յետ գնալով) Հը՞, ինչ պատահեց ... եթէ ուզում ես, կարգադրեմ, քեզ հիւանդանոց տանեն:

Մ. ՂԱԶԱՐ

Հիւանդանո՞ց ... ի սէր Աստուծոյ ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ուրեմն, Դանիէլ, կարգադրիր, որ մի ֆայտոն գայ ... (Դանիէլը ուզում է դուրս գնալ):

Մ. ՂԱԶԱՐ

Կաց, Դանիէլ, կաց, ամա՛ն, Ջանիդ մատաղ, դօխտուր Ջան, հի-

ւանդանոցը տեսայ թէ չէ՝ ղրաղս կը քաշեմ, էն սհաթը հոգիս կը տամ, Զուշիկիս ուրախութիւնը չեմ տեսնի, դու էլ չես ուզի, որ նրա ուրախութիւնը չը տեսնեմ, չէ՞ ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

Իհարկէ չէ. չես մեռնի, չէ. աղջկաղ ուրախութիւնն էլ կը տեսնես։

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Բաս Նարգիզը ղրուստ է ասում, հաստատ է։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Հիւանդանոց գնալ որ չես ուզում, տանը մէնակ ոնց պէտք է բժշկուես։

Մ. ՂԱԶԱՐ

Կինս ու աղջիկս ինչ են, բժիշկ։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Եթէ նրանց վրայ վստահ ես՝ ուրեմն կարող ես տանը բժշկուել ... հա, ուր են նրանք ...

Մ. ՂԱԶԱՐ

Տանն են, բժիշկ, իրանց օթախումը։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Բաս կանչիր թող գան։

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Կանչեմ ... (նրան) Նրանք հիւանդ չեն, բժիշկ, Աստուած վկայ, հիւանդ չեն։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Գիտեմ հիւանդ չեն, բայց պիտի գան, ես ուզում եմ որ գան։

Մ. ՂԱԶԱՐ

Էլ ինչի՞ են պէտք, որ գան (կողմը) չը լինի՞ հէնց հիմի է ուզում նշանը տայ. (նրան) եթէ մի բան կայ՝ ասեմ գան։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Իհարկէ կայ, մեծ բան կայ։ Ասա խնդրեմ, քանի՞ տարեկան է աղջիկդ։

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Ըհը՞, քիչ քիչ լեզուն բացւում է ... (նրան) ճիշտը, բժիշկ, նշանուելու հէնց լաւ վախտն է։

ԲԺ. ԱՆՏՈՆ և ԴԱՆԻԷԼ

Հա՞ ...

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Ջա՞ն ... քէֆներն եկաւ ... չլինի երկուսն էլ ուզում են (նրանց) Բա՞ս ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ուրեմն մեծ է։

Մ. ՂԱԶԱՐ

Չէ, մեծ չէ, բժիշկ, 17 տարեկանը մեծ է։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Դրուստ որ մեծ չէ ... դէհ, ուրեմն կանչի, կանչի ...

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Աչքիս վրայ (նրան) կանչեմ, աղբէր։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ինչպէս տեսնում եմ, մուխսի աղա, հալդ լաւ է, տուն ու տեղդ լիքը ... (բոյթը, ցուցամատն ու միջի մատը իրար շփելով) էս էլ բոլ. հէնց էդ մի աղջիկն ունես, չէ՞ ...

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը եւ մատը կծելով) Բանը պիտի խարար անի ու աղբաթս խառնի։ (Նրան) Չէ, բժիշկ, հարուստ չեմ, բայց փառք Աստուծոյ, աղքատ էլ չեմ ... հա, բժիշկ, հէնց էդ մէկն է. երեքն էլ թաղել եմ։

ԴԱՆԻԷԼ

Համեստութիւն է անում, բժիշկ, ասում են, լաւ կարողութեան տէր է, երկու ջրաղաց ունի, հինգ դուքան, երեք բաղ, երկու քարվանսարա ու շահով տուած փող էլ, էլ ինչ լինի, ունեցածն էլ, Աստուած պահի, մի աղջիկ է, որ կայ։

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Ասա քեզ ով հարցրեց, որ կոտրած գդալի պէս մէջ ընկար։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Այո, լսել եմ, սա մեր եկեղեցւոյ նախկին երեսփոխանը չի ...

Մ. ՂԱԶԱՐ

Ես ինքս եմ, որ կամ ...

ԴԱՆԻԷԼ

~~Հա, նա է, պ. բժիշկ, որ~~ ... (ականջումը փսփսում է)։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Մթթէ ...

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Էս խէր սեօյլամազը ո՞րտեղից բուսաւ. (Նրան) սուս կաց, Դանէլ, փսփսացը տուն կը քանդի ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ինչ և իցէ, լաւ ես, լաւ, շատ ուրախ եմ. ուրեմն կանչիր ...

ԴԱՆԻԷԼ

~~Հաւատա բան չը կայ, մուխի ապա, ուրիշ բան էլի ասում։~~

Մ. ՂԱԶԱՐ

Լաւ, գիտեմ (առանձին) ես քո հախից կը գամ. (բժշկին) կանչեմ, բժիշկ Ջան, կանչեմ ... (կողմը) ատամներդ, գիտեմ, փողի ես սրել, բայց ոչ տեսանես զեզիպատս։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Դէ կանչիր է՞ ... ես շտապ եմ, գնում եմ։

ԴԱՆԻԷԼ

~~Որ ասում է կանչիր, կանչիր էլի, դու էլ։~~

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) ~~Աստուած իմանայ սա ինչի է շտապում~~ ... (բժշկին) չէ, բժիշկ Ջան, մի գնա, մնա, մնա ... բայց (կողմը) էլ օգուտ չունի, դուշ երեսին կասեմ ... (Նրան) ախր, գիտես ինչ կայ, բժիշկ, ամօթ է ասել ... ը, ը, ը ... աղջիկս, չունի, բժիշկ։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ի՞նչ չունի։

Մ. ՂԱԶԱՐ

Էն, էլի, բժիշկ ... հա, չունի բժիշկ ... (Դանիէլին) էնպէս չի՞ (Նրան) ամա ես էլ ինչ վկայ գտայ ... (Դանիէլին) էն զաղին ինչ են ասում, դու կիմանաս, Դանէլ ...

ԴԱՆԻԷԼ

(Կողմը) Ի՞նչ է դուրս տալիս (Նրան) չը գիտեմ ինչ ես ուզում ասել։

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Ջհանդամը, թէ չը գիտես, ես կասեմ (բժշկին) հա, բժիշկ, էն զաղից չունի, համա, արիէլին կաց, ուսում լաւ ունի։

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Կողմը) Ի՞նչ է դուրս տալի (Նրան) քեզ ասում եմ կանչիր, շատ

ուրախ եմ, որ լաւ ուսում ունի, ինձ հէնց այդպէսն է հարկաւոր, որ ամեն բան հասկանայ։

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Օխա՛յ ... սիրաս տեղն ընկաւ (Նրան). ախը ասում եմ էն զաղ, ը, ը, ը, ի՞նչ է էն անիծածի անունը ... մի խօսքով, բժիշկ Ջան, ասում եմ ուսում ունի՝ համա էն զահրումարից չունի, դու ուսումով մարդ ես, շատ կը հասկանաս, հըմի թէ ուզում ես՝ կանչեմ։

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Կողմը) Իսկ որ ձանձրացրեց. (Նրան) ախը ի՞նչ չունի է՞ ... չեմ հասկանում։

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Սուտ ես ասում, (Նրան) էն էլի, ես ու դու որ գիտենք ... ամօթ ա ասել ... ը, ը, ը, հեռու հարկից ... որ իմ ջիբից պիտի դուրս գայ՝ քու ջէբը մանի (բարձր) օժի՛տ, օժի՛տ, բժիշկ Ջան, հա, օժիտ չունի (կողմը) ովվվվվվ, անջախ միտքս ընկաւ էդ անիծած խօսքը (Դանիէլը ծիծաղում է)։

ԴԱՆԻԷԼ

(Կողմը) Ի՞նչ ձեռք կը տայ, որ միտքդ ընկնի։

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Սա ինչու՞ է աղօթածի պէս քթի տակ մռթմռթում։

ԴԱՆԻԷԼ

Ի՞նչ ...

Մ. ՂԱԶԱՐ

Ոչինչ, ասում եմ պարկապզուկդ թանկ ա։

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Ծիծաղելով) Ի՞նչ անենք կամ ով է հարցնում օժիտ ունի՝ թէ

չունի։ Մեր խօսակցութեան մէջ այդպիսի խօսքերը աւելորդ և դատարկ բաներ են ... օժիտի վերայ ով է մտածում. կանչիր, քեզ ասում եմ ... առանց օժիտի էլ գործը գլուխ կը գայ, հերիք է, որ ուսում ունի (Դանիէլը ծիծաղում է)։

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Լօթին պլինդ է կպել (Նրան) ասում ես կանչեմ էլի։

ԴԱՆԻԷԼ

Հա՛, հա՛, չը լսեցիր։

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) ~~Տօ սաա քեզ ինչ~~ է՞ ... (բժշկին) տե՛ս, կանչում եմ, բժիշկ, փոշմանութիւն չը լինի հա՛ ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Կողմը) Կատարեալ ձանձրացրեց, (Նրան) ի՞նչ փոշմանութիւն կարող է լինել ... փոշմանողը դու ես լինելու՝ եթէ չը կանչես։

Մ. ՂԱԶԱՐ

Բաս հասատատ կանչեմ էլի։

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Կողմը) Կատարեալ յուսահատեցրեց ... (Նրան) իհարկէ կանչիր, մի ժամ է ասում եմ կանչիր՝ էլի չես լսում ... նու՛, ես գնում եմ, քեզ խօսք հասկացնել չի լինի։

Մ. ՂԱԶԱՐ

(Մօտ վազելով՝ ուզում է փէշից բռնել) Ի սէր Աստուծոյ, բժիշկ ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Փայտով յետ հրելով) Հեռացիր ... (հեռանում է)։ Զատպում եմ, կնոջդ էլ կանչիր, կանչիր նաև ծառայիդ։

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Ասա նա ինչպես է, (նրան) Համբոյլին, բժիշկ։

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Կողմը) ... Տէր Աստուած, դու ինձ համբերութիւն տաս ... (նրան) ես չը գիտեմ Համբո է թէ Մամբո՝ միայն կանչիր ի սէր Աստուծոյ։

Մ. ՂԱԶԱՐ

Էս սոնթին, բժիշկ, մի նեղանայ, (կանչելով), Համբո, Զուշիկ, Նարգիզ ... եկէք ... ներս եկէք ... բժիշկը կանչում է։

ԴԱՆԻԷԼ

(Կողմը) Փաւք Աստուծոյ, որ կանչեց։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Վերջապէս ... այ օտարօտի մարդ։

ՏԵՍԻԼ Թ.

ՆՐԱՆՔ ԵՒ ՀԱՄԲՈ

ՀԱՄԲՈ

(Ներս մտնելով) Ի՞նչ ա, աղա։

Մ. ՂԱԶԱՐ

Զօռը պինչդ ա, մենակ քեզ կանչեցի՞ ... ինչ եղան ...

ՀԱՄԲՈ

Բարիշնէն նոր շորերն ա հագնում, որ խանումի հետ գայ։

Մ. ՂԱԶԱՐ

Գնա ասա շուտ գան (գնում է) դու էլ նրանց հետ արի։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ես շատապում եմ, թող հին շորերով գայ, վնաս չունի։

ԴԱՆԻԷԼ

Իհարկէ է, շորը նշանակութիւն չունի, ինքն է հարկաւոր։

Մ. ՂԱԶԱՐ

(Դանիէլին) Հա՛ ... (կողմը) հաւատայ, որ մեռածի բաղդը բացուեց. (բժշկին) եաւաշ ասեմ գայ (մօտենում է դրանն ու էլի յետ դառնում), երեսի ամաչում է, բժիշկ ջան, ախը ում աղջիկն է, որ ամաչկոտ չըլինի. խակ և խակ հայ-քրիստոնէի աղջիկ է. անտես, խոհեմ. աղայ չունիմ, բժիշկ, համա հաղար աղայ ածի ... մի խօսքով, ինչ գովեմ ... հիմի կը տեսնես էլի, բայց օրը գայ բարին հետը՝ յետոյ աւելի լաւ կը տեսնես։

ԴԱՆԻԷԼ

(Կողմը) Այ շատախօս թուքթակ .. (նրան) էդ մասին բժիշկը շատ է լսել, մուխսի Ղազար, միայն դու շուտ արա, կանչիր։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Այո՛, լաւ գիտեմ. կանչիր վերջապէս ... եթէ միտք չունիս ...

Մ. ՂԱԶԱՐ

Էս սոնթիս, էս սոնթիս, բժիշկ ջան, մնց միտք չունեմ (կողմը) անջախ ես ճանկս ընկել (մօտենում է դրանն ու կանչում), արի գաս, արի, շորերդ թէ չես փոխել՝ հարկաւոր չի, մի փոխի, գիտենք որ շոր շատ ունես (բժշկին) երկու սնդուկ ու մի կամօդ բերնէ բերան լիքը, սուտ չը կայ (դէպի դուրս) առանց էն էլ սիրուն ես, բժիշկը շտապում է, Նարգիզ, եկէք, պրծէք հա՛։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Գիտի գան վերջապէս՝ թէ չէ. ինչ տեսակ մարդիկ են, իրանց օգուտը չեն ուզում։

ԴԱՆԻԷԼ

Ես կարծում եմ զուր ենք սպասում։

ГОСУДАРСТВЕННАЯ БИБЛИОТЕКА

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Էս անիծածը բանը պիտի խարաբ անի հա, բերանը քաղցրացնենք (ցածր՝ Դանիէլին) ձէնդ կարիր, մի գլուխ շաքար բեղ դուրբան։

ԴԱՆԻԷԼ

Աչքիս վրայ (կողմը) ինչպէս տեսնում եմ՝ այս կատակերգութեան վերջը հեսաքըքիր է լինելու։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Նո՛ւ, մուխսի Ղազար, ես համբերութիւնից տրաքուեցի, գնում եմ. (պատրաստւում է գնալու). ուզիղ որ դուք ձեր օգուտը չէք ուզում։

Մ. ՂԱԶԱՐ

Ամա՛ն, ջանիդ մատաղ, բժիշկ ջան, մի՛ գնա, մի՛ խռովի, (կողմը), ոնց թէ իմ օգուտը չեմ ուզում, (դրան միջից) դէ պրծէք է՞, օրհնածները ... (կողմը) ոնց թէ գնում ես, անջախ ես թոռս ընկել։

ՏԵՍԻԼ Ծ.

ՆՐԱՆՔ, ՆԱՐԳԻԶ, ՇՈՒՇԻԿ ԵՒ ՀԱՄԲՕ.

Մ. ՂԱԶԱՐ

Եկան, փառք Աստուծոյ։

ԲԺ. ԱՆՏՈՆ ԵՒ ԴԱՆԻԷԼ

Դրուստ որ փառք Աստուծոյ։

Մ. ՂԱԶԱՐ

(Ներկայացնելով) Էս իմ կնիկը, էս էլ աղջիկս, անունն էլ Շուշիկ, լսած կը լինես, լաւ անուն է, չէ՞, բժիշկ։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Շատ լաւ անուն է, շատ ուրախ եմ ...

Մ. ՂԱԶԱՐ

Հա՛, ներեցէք, պ. բժիշկ, կնոջս անունն էլ Նարգիզ է։

ԴԱՆԻԷԼ

(Կողմը) Շատ հարկաւոր է ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

Շատ ուրախ եմ, (կողմը) զահլա տարաւ։

ԴԱՆԻԷԼ

(Կողմը) Աղջիկը, ոչինչ, վնաս չունի ... ամա մէրը բայզուշ է երևում։

Մ. ՂԱԶԱՐ

Ի՞նչ էիր ասո՛ւմ, Դանէլ ...

ԴԱՆԻԷԼ

Ոչինչ, շաքարը ...

Մ. ՂԱԶԱՐ

(Հրելով) Լաւ, ձէնդ կարիր, (ցոյց տալով Համբոյի վերայ՝ բժշկին), նա էլ բժիշկ, մեր օյինբազ Համբոն է (Համբոն ինքն իրան դրստւում է)։

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Ծիծաղելով) Լաւ, լաւ, շատ լաւ (կողմը) քիչ է մնում կատուի հետ էլ ծանօթացնի, (նրան) այդ բոլորը լաւ, մուխսի Ղազար, այժմ լսեցէք, մայրիկ։

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Ըհը՞, մայրիկ։

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Հանդիսաբար) Ձեր ամուսինը, չը վախենաք, բռնուած է խо-լե-բա-յով։

*

ՆԱՐԳԻԶ և ԶՈՒԶԻԿ

(Կողմը՝ զարմացած) Խոլերայո՞վ ...

Մ. ՂԱԶԱՐ

(Լացի ձայնով) Դրմեսա, ... օյ, օյ, օյ, վա՜յ իմ գլխին։

ՀԱՄԲՕ

(Կողմը) Օխա՜յ, տեղն ա, մշալուղս չես ասա՜յ ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Զարուսնակելով) Զգուշացէք, բոլորդ էլ կարող էք վարակուել. հիւանդի շարբերին չը մօտենաք, սենեակը չը մտնէք, հետը հաց չուտէք, մէնակ չը թողնէք, գրածս դեղերը ժամանակին տուէք՝ մօտը չը գնաք, (Մուխսի Ղազարը բժշկի հակասական խօսքերը լսելով՝ շարունակ երկբայական նշաններ է ցոյց տալիս)։

Մ. ՂԱԶԱՐ

Աստուած վկայ, ոչինչ չը հասկացայ, բժիշկ, (Նարգիզին եւ Զուշիկին) դուք մի բան հասկացա՞ք ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ի՞նչ կայ չը հասկանալու ... սրան հում ջուր չը տաք խմելու, կանաչի չը պէտք է ուտի, եմիշ ուտի՝ կը մեռնի, խոկոյն պէտք է պարկի, օրը երեք անգամ վաննա դրէք. բայց սենեակը չը մտնէք ... փորին տաքացրած աղիս դրէք, մօտը չը գնաք և շուտ շուտ փոխէք, էս ցաւը փոփոխական է ... կրկնում եմ, կշտից հեռացէք ... մէնակ չը թողնէք, հետը չը խօսէք ... ես պրծայ (բոլոր ժամանակ Մուխսի Ղազարը շփոթուած զանազան նշաններ է ցոյց տալիս)։

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Ի՞նչ ասա՜ց ... (Նրան) հէնց էդ, պ. բժիշկ։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Էլ ուրիշ ոչինչ, մնաք բարով (ուզում է գնալ)։

Մ. ՂԱԶԱՐ

Ո՞ւր, բժիշկ, բաս սրանց ինչո՞ւ կանչեցիր։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Որ ասածներս լսեն ու կատարեն։

Մ. ՂԱԶԱՐ

Էդ կը կատարեն բժիշկ, դու էն ասա, Զուշիկիս ի՞նչ ունէիր ասելու։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Էն՝ ինչ որ բոլորին ասացի։

Մ. ՂԱԶԱՐ

Էլ ուրիշ ոչի՞նչ ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

Իհարկէ ոչինչ։

Մ. ՂԱԶԱՐ

Բաս Նարգիզը սուտ է ասում ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ի՞նչ է ասում ...

Մ. ՂԱԶԱՐ

Որ եկեղեցու բակում աչքով ես արել ու ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ի՞նչ է ասում ..... ում ...

ԶՈՒԶԻԿ

(Լացակումած սուր ձիչ արձակելով փախչում է սենեակ, նրան հետեւում է Նարգիզը)։

ՆԱՐԳԻԶ

Ջուր, ջուր հասցրու, Համբո ... (Համբոն դուրս է վազում)։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ի՞նչ պատահեց, ի՞նչ եղաւ ...

Մ. ՂԱԶԱՐ

Էլ ի՞նչ պիտի լինի, Զուշիկիս սիրաը գնաց, իմ ու քո տունը քանդուեց։

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Դանիէլին) գնա՛ ներս, նաշաղիրնի սպիրտ հասցրու, շո՛ւտ (Դանիէլը գնում է Զուշիկի սենեակը)։

Մ. ՂԱԶԱՐ

Դրանով բան չի դառնայ բժիշկ, նրա սպիրտն էլ, ջուրն էլ դու ես, նշանածդ ձեռքից գնաց ... դու միայն կարող ես փրկել նորան։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ի՞նչ նշանած, այ մուխսի, ի՞նչ ես ասում։

Մ. ՂԱԶԱՐ

Զուշիկն էլի ... (ջոգում է) հոգուդ մատաղ, բժիշկ ջան, ազատի նրան, գիշեր, ցերեկ քո անուն է տալի։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Հեռո՛ւ, հեռո՛ւ ինձնից, թէ չէ ինձ էլ կը վարակես ... (կողմը) ի՞նչ է ասում էս մարդը (նրան) երա՞զ ես տեսել, մուխսի, ես ո՞ւր, նա ո՞ւր։

Մ. ՂԱԶԱՐ

Վալլահ լաւ աղջիկ է, բժիշկ, բիլլահ, լաւ աղջիկ է ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ցէր ողորմած Աստուած ...

Մ. ՂԱԶԱՐ

Հէնց պտի բուլվարները չափ ու ձև անի ու կոտրտուելով ման գայ, որ նոր հաւանեմ։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ես միտք չունեմ պսակուելու, մուխսի աղա ... ի սէր Աստուծոյ ձեռք վերցրու։

Մ. ՂԱԶԱՐ

(Կողմը) Կը կակղես՝ կուտես. (նրան) ինչի՞, այ որդի, հէնց պրտի հէր ու մէր ունենաս, որ քեզ խրատեն ... բաս քո ուսումը քեզ չի կարում խրատի ... ես քեզ հէր՝ նարվիզն էլ մէր ... ձեռդ տու, մենք քո լաւն ենք ուզում որդի ... խէրը տես։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Շնորհակալ եմ, բայց ...

Մ. ՂԱԶԱՐ

Էլ ի՞նչ բայց ... բայցը որ ցանես՝ բողկ կը բուսնի ... գիտեմ, թէ քու բայցի տակը ի՞նչ պոչ ա թաքկացած ... նոր բժիշկ ես, փող չունես, գիտեմ ... հարսանիքիդ ծախսը ես կանեմ, մի՛ վախի ... դու հո գիտես, որ քաղաքային հիւանդանոցի հոգաբարձու եմ ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

Գիտեմ ...

Մ. ՂԱԶԱՐ

Դէ որ գիտես՝ պրծաւ. բժշկի պաշտօնը քոնը կը լինի ... ռոճիկը 1200 ... հիմի ի՞նչ ես ասում։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Խօսք չեմ կարող տալ, մուխսի աղա, դեռ վաղ է։

Մ. ՂԱԶԱՐ

Ասա ուշ է, որդի, քանի՞ տարեկան ես ... 30 հո կա՞ս։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Կամ։

Մ. ՂԱԶԱՐ

Ապրես ... այսուհետև շատ որ ապրես՝ 30-ից աւել չես ապրելու ...

կէսը գիշեր հաշուի՝ մնայ 15 տարի, հրմի որ չը պսակուես՝ էլ երբ ես պսակուելու, որ որդի մեծացնես, ուսում տաս, պսակես ու նրա ուրախութիւնը տեսնես ... հը՞, դրուստ եմ ասում՞ թէ չէ. ինչ ես ասում

ԲԺ. ԱՆՏՈՆ

Դեռ պէտք է մտածել ...

Մ. ՂԱԶԱՐ

Էլ մտածելու ժամանակ չըկայ, մինչև մտածես՝ օրը կը մթնի ... կտրական ասա. առնում ե՞ս, թէ չէ։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Զօրով ա ...

Մ. ՂԱԶԱՐ

Բաս կամով ա ... խօսք ես տալի՝ խօսք տուր, թէ չէ վաղում եմ փաթաթուեմ շնչիդ, դու գիտես ... էլ ձեռքիցս չես պրծնի, ինձ հետ քեզ էլ պէտք է գերեզման տանեմ ... վահ, էլի սիրտս սկսեց խառնել։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Ախը ...

Մ. ՂԱԶԱՐ

Էլ ախը մախը չեմ գիտի (շարժւում է դէպի նա), մատիտ մատանին հանիր՝ թէ չէ, եկայ, ասում եմ։

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Ձեռնափայտով առաջը կտրելով) Կա՛ց, կա՛ց ... բաս առանց օժիտի ...

Մ. ՂԱԶԱՐ

Էն էլ կը տամ, պաշտօնն էլ, համա օժիտի համար ես ու դու պիտի իմանանք, մարդու բան չասես, համաձայն ե՞ս։

ԲԺ. ԱՆՏՈՆ

Համաձայն եմ։

Մ. ՂԱԶԱՐ

Ապրես։ Հիմի տես ինչ շուտ եմ կանչում տնեցոց ... (կանչում է) Նարգիզ, Զուշիկ, Համբո, Դանէլ, պարկապղուկդ առ արի ...

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՆՐԱՆՔ ԵՒ ՄԻՒՍՆԵՐԸ, ՑԵՏՈՑ ՇՈՒՇԻԿ.

ԴԱՆԻԷԼ

Ի՞նչ կայ, ինչ ...

ԲԺ. ԱՆՏՈՆ

Նշանածս ուշքի եկաւ ...

ԴԱՆԻԷԼ

(Ապշած) Էս ինչ է ասում։

ՆԱՐԳԻԶ

Ի՞նչ խարաբ է այ մարդ ...

Մ. ՂԱԶԱՐ

Խէր խարաբ. ասածդ դուրս եկաւ, ինչ եղաւ Զուշիկը։

ՀԱՄԲՕ

Բարիշնէն չի գալի աղա։

ՆԱՐԳԻԶ

Թարսուել ա էլի։

Մ. ՂԱԶԱՐ

Հիմի էլ նա է նազ ծախում (մտնում, ձեռքից բռնած դուրս է բերում եւ կանգնեցնում բժշկի մօտ), որ ասում եմ ամաչկոտ է ... քեզ փէշքէշ բժիշկ չան ... մատանիքը տուր։

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Մատանին նրա մատն անցկացնելով), Էս ինչ արի ես։

ԴԱՆԻԷԼ

(Կողմը) Դժուեցիր... երաղ է։

ՆԱՐԳԻԶ

(Կողմը) Ախը գիտեմ, որ Թաղագիւլը սուտ խօսան կնիկ չի է ...

Մ. ՂԱԶԱՐ

Նշանուեցիր, բժիշկ, փեսա չան, (համբուրելով նրան եւ աղջկան՝— միւսներին) շնորհաւորէք է ... ինչ էք կանգնել։

ԲՈԼՈՐԸ ՄԻԱՍԻՆ

Աստուած շնորհաւոր անի, ծլիք, ծաղկիք, զօրանաք, մի բարձի ծերանաք (Նարգիզը համբուրում է բժշկին եւ Զուշիկին):

ՀԱՄԲՕ

(Կողմը) Համբոյի փէշքաշը չը մոռանաք:

ԲԺ. ԱՆՏՈՆ

(Ազատուելով Նարգիզի գրկից) Ուրեմն վերջացաւ ... էսպէս զօրով նշանադրէք երբէք չէի տեսել:

Մ. ՂԱԶԱՐ

Աշխարհ է, փեսա ջան, կը պատահի, ես էլ էսպէս սուտ հիւանդ իսկի չէի եղել:

ԴԱՆԻԷԼ և ՀԱՄԲՕ

(Զարմացած) Վահ ...

ՀԱՄԲՕ

Մուխսի աղա, հիմի էլ մշալուղս չես տա՞յ:

Մ. ՂԱԶԱՐ

Հիմի որ կը տամ ... քո շաքարն էլ Դանէլ:

ՀԱՄԲՕ

Տեսնենք աղա (Դանիէլին) մուխսի ա, վախում եմ, վալլահ: Որ էլի չը խաբի՝ շատ բան ա:

ТИФЛИССКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ БИБЛИОТЕКА

(ՓԱՏԿԵՐ)

ՎԱՐԱԳՈՅՐ:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI--1922
именна. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0378109

ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Դասագիրք գծագրութեան, (բ. տիպ.) գինն է . . . 50 կոպ.
2. Սկզբունք երկրաչափութեան (Դիստերվէգի) . . . . 40 »
3. Վայելչագրութեան դասաւանդութեան եղանակը . . 20 »
4. Հայկական գեղագրութիւն (գ. տիպ.) . . . . . 30 »
5. Ժամանակ կրթութիւններ գեղագրութեան . . . . 3 »
6. «Փառնակէս» Գրականական երեկոյ, վող. մի արար. . 20 »
7. » 200000, վող. մի արար. բ. բարեփ. տպագր. 40 »
8. » Բանաստեղծ, վող. մի ար. բ. բարեփ. տպագ. 40 »
9. » «Նիսիա», վող. մի արարուածով . . . 40 »
10. » Խոլերա, վող. մի արարուածով . . . 40 »
11. Уроки чистописанія для дѣтей . . . . . 25 »

ՊԱՀԵՍՏՆԷ

Երևան.—Մեր մօտ.—Հասցէն՝ Макару Теръ Саркисянцъ.
Գրավաճառանոց Պետրոս Յովհաննիսեանի.
Տփխիս.— » Կենդրոնական.

Ծանօթութիւն.—Ձուտով մամուլին կը յանձնուի՝
1) «Կը կակղես՝ կուտես» կամ «Ճարպիկ փաստաբան».— վող. մէկ արար.
2) «Ձուտոզի մալը ուտողին հալալ ա», վող. մէկ ար.

Գումարով ընողների համար զիջումն կը լինի։

59.780